

1. Հաշվետվություն

Հարգելի ընկերներ, ես կաշխատեմ հնարավորինս ընդհանուր գծերով և սեղմ ժամանակահատվածում ներկայացնել Ձեր ուշադրությանը թե ինչ աշխատանքներ է կատարվել 2011թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին Շատվան համայնքում իմ և գյուղական համայնքի աշխատակազմի կողմից:

2011թ-ի Հունվար ամսից սկսած իմ պարտադիր լիազորությունների շրջանակներում կատարվել է հետևյալ աշխատանքները.

1. Ֆինանսատնտեսական ոլորտում նախապատրաստվել է համայնքի բյուջեյինախագիծը համակողմանիորեն քննարկվելուց հետո, ներկայացվել ավագանու հաստատմանը :

Բյուջեում ներառնված է եղել սեփական եկամուտները հետեվյալ դասակարգմամբ.

1. Հողի հարկի` (նաև ապառքների գծով)
2. Գույքահարկի` (նաև ապառքների գծով)
3. Հողի վարձավճարների` (ապառքների)
4. Տեղական տուրք`
5. Աշխատավարձերի ապառքների մարման

Բյուջեով նախատեսված և հաստատված եկամտային մասի, հավաքագրումը ըստ հարկատեսակների դեկտեմբերի 31-ի դրությամբ մեզ հաջողվել է արձանագրել հետևյալ արդյունքները.

Հ/Հ	Հարկատեսակի անվանումը	Եկամտային մասով Հազ. դր.	Նախատես. ապառք. Հազ. դր.	Ընդամենը պլան. գումարով	Կատարողակ. գումարով	Կատարողակ. տոկոսով
1.	Հողի հարկ	1836.0	900.9	2752.9	2202.9	86%
2.	Վարձավճար	2586.1	772.0	3358.1	3283.1	97.8%
3.	Գույքահարկ	250	-	250	211.0	84%
4.	Տեղական տուրք	20.0	-	20.0	18	90%
5.	Աշխ. ապառք	-	-	1935.0	1935.0	-
	Ընդ. Հարկ.	4592.1	-	8316.0	-	96%

Աշխատակազմի ջանքերով բյուջեյի եկամտային մասը (սեփական) ընդհանուր հաշվարկով կատարվել է ~ 98%-ով, որը դրական ենք համարում:

Կատարված աշխատանքի շնորհիվ հնարավոր է եղել մարել նախորդ տարիներին կուտակված աշխատավարձի ապառքները ամբողջությամբ, նոր պարտքեր աշխատավարձի մասով չեն կուտակվել ինչպես նաև մուծվել է պետ. Բյուջե սոցվճար 480.1 հազ. դրամ:

2. ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Դեռ հունվար ամսին գյուղացիների սոցիալական վիճակը բավականին լարված էր արտարժույթի կուրսի բարձրացման, նախորդ աշնանը կարտոֆիլի իրացման գների անկման և եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով: Այս լարվածությունը փոքր ինչ մեղմացրեց պետության կողմից հատկացված գյուղատնտեսական աջակցության նպատակով սուբսիդիաի տրամադրումը, ինչը խթան հանդիսացավ գարնանային գարուն, աշնանացան ցորենի ցանքատարածությունների ավելացման համար: Գյուղացիների խորը

դժգոհությունն առաջացրեց սերմվարկի տրամադրման գործընթացում ներքին սահմանի՝ 3 հա-ից մինչև 16հա- բարձրացումը, ինչը հանգեցրեց նրան, որ գյուղացին իր հին սերմացուն վաճառեց նորը ստանալու հույսով, սակայն այդպես էլ չստացավ, կառավարության կողմից կատարված այդ փոփոխության պատճառով: Այս փաստը ստիպեց գյուղացիներին արդեն նախապատրաստված ամառնավար արված հողի վրա նորից սերմեր ճարել և կատարել աշնանացան:

Գյուղի սոցիալական լարվածությունը չի թուլանում աշխատատեղերի բացակայության պատճառով:

Այս լարվածությունը փոքր ինչ մեղմանում է ամռան ամիսներին կարտոֆիլի պլանտացիաներում աշխատույժի պահանջի աճման հետևանքով սակայն 4-ամիս հետո երիտասարդ ընտանիքները, որոնք ունեն 2-4 դպրոցահասակ երեխաներ պետության կողմից ոչ մի աջակցություն չեն ստանում:

3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 95 աշակերտներ:

Դպրոցում աշխատում են 18 ուսուցիչներ և 8 ուսումնաօժանդակ թնի աշխատողներ:

Դպրոցը միշտ եղել է գյուղապետարանի ուշադրության կենտրոնում: 2011թ-ին դպրոցում իրականացվել է 2 ծրագիր վերանորոգվել է ուսումնական մասնաշենքը, կառուցվել է 1 համակարգչային դասասենյակ, գնվել է 6 նոր համակարգիչներ Word Vision ՀԿ-ի կողմից, տրամադրվել է մարզագույքեր: Սակայն ընդհանուր մյուս 2 մասնաշենքերը գտնվում են վթարային վիճակում և կարիք ունեն հիմնարար վերանորոգման:

Գյուղապետարանի կողմից կատարվել է ներդրում և այժմ կա դպրոցի վերանորոգման նախագիծ նախահաշիվ: Այդ նախագիծը ներկայացվել է մեր կողմից կառավարության բյուջեյով գումար հատկացնելու ակնկալիքով, սակայն հարցը մնում է չլուծված:

4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Գյուղում գործում է բուժամբուլարտորիա 6 բուժաշխատողներով(1 բժիշկ և 5 բուժաշխատող): Բուժամբուլատորյան տեղավորված է հարմարեցված շենքում, որը մեր կողմից վերակառուցվել է 1999թ-ին:

Ամբուլատորիան բուժաբքավորումներով վերազինվել է << Բժիշկներ առանց սահմանի>> կազմակերպության կողմից 2006թ-ին: Մինչ 2007թ-ը <<ԱՄՔՈՐ>> կազմակերպությունը բուժամբուլատորիային սպասարկում էր նաև դեղորայքով, սակայն այժմ այդ բացը մենք փորձում ենք լրացնել<< Բաց դռների օր>> կազմակերպելով:

Մեր նախաձեռնությամբ 2011թ-ին կազմակերպվել է 2 բաց դռների օր, որտեղ անվճար բուժզննման են ենթարկվել 231 քաղաքացիներ, և 98 երիտասարդ մայրեր նաև հարակից գյուղերից, որոնք սպասարկվում են մեր բուժամբուլարտորիայի կողմից:

Ձրի օպտիկական ակնոցներ են բաժանվել թոշակառու ազգաբնակչությանն ու տեսողական խնդիրներ ունեցող քաղաքացիներին:

5. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2010թ-ին վերջապես ասֆալտապատվեց Վարդենիս-Շատվան- Ջաղացաձոր միջ համայնքային ճանապարհները: Վերանորոգվեցին գյուղամիջյան 6 ճանապարհային կամուրջներ:

2011-ի գյուղատնտեսական տարում ցանվել է 180 հա կարտոֆիլ, 345 հա աշնանացան և 200 հա զարնանացան:

Անբարենպաստ եղանակի պատճառով սակայն բարձր բերք չի ստացվել: Թիվ1 խնդիր է մնում վարելահողերի սննկացման հարցը, որի պատճառը քիմիական տարբեր պարարտանյութերի թանկ լինելն է: Բացի դրանից, Հանրապետությունում չկան ֆոսֆորական,կալիումական պարարտանյութեր:

Ցածր բերքի պատճառ է հանդիսանում նաև գյուղի 903 հա հողատարածքների մեծ մասի անջրդիությունը:

903 հա վարելահողերից միայն 146 հա-ն է ջրովի, որոնք ջրվում են արտեզյան հորերի միջոցով:

1992թ-ից ի վեր չի նորոգվել ոռոգման համակարգը:

Անմխիթար վիճակում են հեղեղատարները , ոռոգման առումները ինչը նպաստում է արտեզյան հորերից մինչև ոռոգվող դաշտ հասնող ջրի մոտ 30-40 % ի կորուստների, իսկ այս փաստը բերում է ոռոգման թանկացմանը, ինչը գյուղացու գրպանի համար չէ:

6. ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում առկա է հետևյալ անասնազվիաքանակը

1. Խոշոր եղջերավոր անասուններ-430 գլուխ
2. Մանր եղջերավոր անասուններ 678 գլուխ

Արտադրված կաթը գյուղացիները վաճառում են կգ-ը 100-120 դրամով, որը մթերվում է տեղական արտադրողների և <<Աշտարակ կաթ >> կազմակերպության կողմից:

Գյուղում տարեկան արտադրվում է հետևյալ քանակի և տեսակների գյուղմթերքներ

1. Ցորեն-414 տ
2. Կարտոֆիլ-15160տ
3. Գարի-190տ
4. Միս տավարի-12,0տ
5. Միս խոզի-13,0տ
6. Միս ոխչարի-5,0

Արտադրված գյուղմթերքներից իրացման խնդիրներ հաճախակի առաջանում են կարտոֆիլի, հացահատիկի և կաթի գծով:

7. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում առկա է 238 ընտանիք 917 շնչով, որոնցից 147 շունչ ապրում են առանց մշտական հաշվառման:

2011թ-ին գյուղում ծնվել է 6 երեխաներ, մահացել են 8-ը:

Մեծ մաս են կազմում թոշակառուները: 2011թ-ին նկատվել են արտագնա աշխատանքի 46 դեպք երիտասարդների կազմից:

Մեզ անհանգստացնում է գյուղի սոցիալական լարվածությունը, որը հետագայում մեր կարծիքով կբերի միգրացիայի:

8. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏ

Գյուղը չունի մարզադահլիչ: Միակ մարզադահլիճը դպրոցում է, որը գտնվում է վթարային վիճակում:

Գյուղն ունի 2 ֆուտբոլի դաշտ:

2011թ-ին գյուղի ֆուտբոլի և վոլեյբոլի հավաքականները մասնակցել են Վարդենիսի տարածաշրջանում կազմակերպված մրցումներին և զբաղվել համապատասխանաբար 2-րդ և 3-րդ տեղերը:

Գյուղի երիտասարդության ակտիվ հանգստի կազմակերպման համար չկա համապատասխան կառույց: Միակ կառույցը գյուղապետարանի դահլիճն է, որը հիմնարար վերանորոգման և կահավորման կարիք ունի: Գյուղի ֆինանսական առողջացման գործընթացի ավարտից հետո նախատեսված են զբաղվել այս խնդիրներով:

Ավարտելով խոսքս ուզում եմ նշել, որ համայնքի 2011թ-ի աշխատանքները ավելի ինտենսիվ կլինեն. Եթե 2011թ-ում կառավարության կողմից մատնանշված ցածր տոկոսով վարկային ռեսուրսներից օգտվել նաև շաքային գյուղացին: Այն ինչ ԱԿԲԱ-կրադիտ ագրիկոլ, <<Կամուրջ>>, <<Արեգակ>>, <<Ֆինկա>> վարկային կազմակերպությունները շարունակում են 24%-ով փոդեր վաճառել ազգաբնակչությանը: Այսօր բանկերը ոչ թե գյուղացու գործընկերներն են այլ մեղմ ասած կործանիչները:

Այս առումով անհրաժեշտ ենք համարում կառավարության և կենտրոնական բանկի ուշադրությունը հրավիրել այս ծրագրի կարգավորման վրա:

Շնորհակալություն՝

Շատվանի Համայնքապետ՝

Լ.Աբրահամյան